



**ԱՌԱՋՆՈՐԴԱՐԱՆ ՀԱՅՈՑ**  
**Ա.Մ. ՆԱՅԱՆՎԵՐՈՒ ԱՐԵՄՏԵԱՆ ԹԵՄԻ**  
**WESTERN PRELACY**  
**OF THE ARMENIAN APOSTOLIC CHURCH OF AMERICA**  
**H.E. ARCHBISHOP MOUSHEGH MARDIROSSIAN, PRELATE**  
Tel: 818-248-7737/8, Fax: 818-248-7745  
E-mail: [Prelacy@aol.com](mailto:Prelacy@aol.com) Website: [www.westernprelacy.org](http://www.westernprelacy.org)



**ԱՌԱՋՆՈՐԴ ՍՐԲԱՉԱՆԸ ՊԻՏԻ ՀԱՆԴԻՍԱՊԵՏԷ ԷՆՍԻՆՈՅԻ**  
**Ս. ՆԱՅԱՏԱԿԱՑ ԵԿԵՂԵՑՈՅ Ս. ՊԱՏԱՐԱԳԻՆ**

Կիրակի, 21 Յունիսին, Թեմիս բարեխնամ Առաջնորդ Բարձր. Տ. Մուշեղ Արք. Մարտիրոսեան պիտի հանդիսապետէ Էնսինոյի Սրբոց Նահատակաց Եկեղեցւոյ Ս. Պատարագին եւ պիտի փոխանցէ օրուան յատուկ իր պատգամը:

**PRELATE TO PRESIDE OVER DIVINE LITURGY AT**  
**HOLY MARTYRS CHURCH**

On Sunday, June 21<sup>st</sup>, H.E. Archbishop Moushegh Mardirossian, Prelate, will preside over Divine Liturgy at Holy Martyrs Church in Encino. The Prelate will also deliver the sermon.

\*\*\*

**ԱՉԳԱՅԻՆ ԱՌԱՋՆՈՐԴԱՐԱՆԻ**  
**«ԼՈՒՍԱՒՈՐԻՉ» ԵՐԻՏԱՍԱՐԴԱԿԱՆ ԵՐԳՉԱԽՈՒՄԲԸ**  
**ՀԱՆԴԵՍ ԿՈՒ ԳԱՅ ՀԱՄԵՐԳՈՎ**

Ծանօթ է որ Ն.Ս.Օ.Տ.Տ. Արամ Ա. Կաթողիկոս 2009 տարին հռչակած է ԵՐԻՏԱՍԱՐԴՈՒԹԵԱՆ ՏԱՐԻ եւ բազմաթիւ նախաձեռնութիւններ տեղի կ'ունենան:

Վեհափառ Հայրապետի պատգամին գործնականօրէն ընդառաջելով, Ազգային Առաջնորդարանիս «Լուսաւորիչ» երիտասարդական խումբը, Հինգշաբթի, 25 Յունիսի երեկոյեան ժամը 7:30ին, Կլենտէյլ Փրեսպիթերիըն Եկեղեցւոյ մէջ (Հարվըրտ եւ Լուիզ փողոցներու խաչմերուկին), հանդէս պիտի գայ համերգով մը, ներկայացնելով հոգեւոր, ժողովրդային ու ազգային երգերու փունջ մը:

Ձեռնարկը կը վայելէ Առաջնորդ Սրբազան Զօր հովանաւորութիւնը:

Խմբավարն է Ազգային Առաջնորդարանի Քրիստոնեական  
Դաստիարակութեան Բաժանմունքի վարիչներէն՝ Յոզ. Տ. Պարթեւ Վրդ.  
Կիւլիմեան:

Մեր հաւատացեալ հանրութեան համար նոր անուն մը չէ  
«Լուսավորիչ» երգչախումբը: Անկա կազմուած էր Հայաստանի մէջ  
քրիստոնեութեան պետական կրօն հռչակման 1700ամեակին առիթով:

Այսօր, անկա մեր ժողովուրդին կը ներկայանայ իւրայատուկ  
դիմագիծով՝ երիտասարդ կազմով:

Այսօրուան երգահանդէսը գործնական մէկ արտայայտութիւնն է այն  
նախաձեռնութիւններուն, որոնց դիմած են Ազգ. Առաջնորդարանս ու անոր  
հովանիին տակ գործող եկեղեցիներն ու երիտասարդական միութիւնները,  
ընդառաջելու համար Ս. Աթոռոյս գահակալ Ն.Ս.Օ.Տ.Տ. Արամ Ա.  
Կաթողիկոսի պատգամին, որ 2009 տարին հռչակած է ԵՐԻՏԱՍԱՐԴՈՒԹԵԱՆ  
ՏԱՐԻ:

Անցնող տասը ամիսներու ընթացքին երիտասարդ-  
երիտասարդուհիներ քով-քովի եկան, խանդավառութեամբ ու մեծ  
ուրախութեամբ սորվեցան հոգեւոր, ժողովրդական ու ազգային երգեր,  
որոնք պիտի գունաւորեն համերգի ծրագիրը:

Համերգին տոմսեր կարելի է ապահովել հեռաձայնելով Ազգ.  
Առաջնորդարան (818-248-7737) կամ համերգին օրը՝ սրահի մուտքին:

Կարելոր մանրամասնութիւն մը. համերգը յառաջաձգուած է մէկ օրով  
եւ փոխան Ուրբաթ, 26 Յունիսի, տեղի պիտի ունենայ Հինգշաբթի, 25  
Յունիսին:

## **PRELACY “LOUSAVORICH” YOUTH CHOIR TO HOLD FIRST CONCERT**

The Western Prelacy is pleased to announce that the recently formed  
“Lousavorich” youth choir will hold its first concert on Thursday, June 25<sup>th</sup>, 2009,  
at Glendale Presbyterian Church (125 S. Louise St.). The concert is being held  
under the auspices of H.E. Archbishop Moushegh Mardirossian, Prelate, and  
will begin at 7:30 p.m.

The “Lousavorich” choir was organized nearly a year ago under the  
leadership of Very Rev. Fr. Barthev Gulumian. It is comprised of 45 members  
from various chapters of the Prelacy Armenian Church Youth Association, who  
have been diligently preparing for their first performance where they will present  
spiritual, national, and traditional songs to our community.

Tickets can be purchased at the door or ahead of time by contacting the  
Prelacy at 818-248-7737.

\* Important note: The date of the concert was moved up to Thursday,  
June 25<sup>th</sup> (it was previously scheduled for Friday, June 26<sup>th</sup>).

\*\*\*

## ԴԵՍՊԱՆ ՄԱՐԻ ԵՈՎԱՆՈՎԻՉԻ ԶԵՏ ԺՈՂՈՎՐԴԱՅԻՆ ԶԱՆԴԻՊՈՒՄ ԱԶԳԱՅԻՆ ԱՌԱՋՆՈՐԴԱՐԱՆԻ ՅԱՐԿԻՆ ՏԱԿ



Հայաստանի հանրապետության մօտ Միացեալ Նահանգներու դեսպան Մարի Եովանովիչ Յունիսի վերջերուն, կարճատեւ այցելութեամբ մը պիտի գտնուի Լոս Անճելըս եւ այս առիթով, պիտի այցելէ Ազգային Առաջնորդարան, պիտի հիւրընկալուի Թեմիս բարեխնամ Առաջնորդ Բարձր. Տ. Մուշեղ Արք. Մարտիրոսեանի, Հոգեւորականաց Դասու, Ազգային Վարչութեան ու ժողովականութեան ներկայացուցիչներու կողմէ, ապա նաեւ մասնակից պիտի ըլլայ ժողովրդային հանդիպումի մը:

Դեսպանին Ազգ. Առաջնորդարան այցելութիւնը նախատեսուած է Ուրբաթ, 26 Յունիսի երեկոյեան ժամը 6ին: Աւելի ուշ, ժամը 7:30ին, Ազգ. Ֆերահեան վարժարանի «Աւետիսեան» սրահին մէջ (5300 White Oak Ave., Encino) տեղի պիտի ունենայ ժողովրդային հաւաք, որուն հրաւիրուած են միութենական ներկայացուցիչներ ու յարգոյ հասարակութիւնը: Դեսպան Եովանովիչ խօսք պիտի առնէ ու պատրաստ է պատասխանելու ներկաներու հարցումներուն:

Այսու կը հրաւիրենք մեր ժողովուրդը ներկայ ըլլալու Ուրբաթ երեկոյեան հանդիպումին, լսելու ամերիկացի դիւանագետը ու զրուցելու անոր հետ:

Յայտնենք նաեւ, որ դեսպան Եովանովիչ Կիրակի, 28 Յունիսին ներկայ պիտի ըլլայ Հոլիվուտի Ս. Կարապետ Մայր եկեղեցւոյ Ս. Պատարագին:

### **PRELACY TO HOST COMMUNITY FORUM WITH AMBASSADOR MARIE YOVANOVITCH**

In the coming days Her Excellency Marie L. Yovanovitch, United States Ambassador to the Republic of Armenia will be arriving in the U.S. to meet with leaders and members of the Armenian community.

Ambassador Yovanovitch will be visiting the Prelacy on Friday, June 26<sup>th</sup>, 2009, where she will meet with H.E. Archbishop Moushegh Mardirossian, Prelate, Clergy, Executive Council, and community representatives.

At 7:30 p.m., the community is invited to a public forum with the Ambassador, which will be held at “Avedissian” Hall of Ferrahian School (5300 White Oak Ave., Encino). During the forum, Ambassador Yovanovitch will address the community, followed by a question and answer session.

On Sunday, June 28<sup>th</sup>, Ambassador Yovanovitch will attend Divine Liturgy at St. Garabed Church in Hollywood.

\*\*\*

## ԱԶԳԱՅԻՆ ՎԱՐԺԱՐԱՆՆԵՐՈՒ ԱՄՎԵՐՁԻ ՀԱՆԴԵՍՆԵՐ

Ազգային վարժարաններու հանդեսներու ծիրին մէջ, յայտնենք, որ Կիրակի, 21 Յունիսին, կ.ե. ժամը 2-ին, Յոլիվուտի Ռոզ եւ Ալէք Փիլիպոս Ազգ. վարժարանի 12-րդ կարգի շրջանաւարտներու հանդէսը տեղի պիտի ունենայ վարժարանի «Ներսէս Թաշճեան» մարզասրահին մէջ:

Իսկ կ.ե. ժամը 4-ին, տեղի պիտի ունենայ Փասատիւնայի Լէոն եւ Յասմիկ Թաւլեան Ազգային Մանկապարտեզի հանդէսը, Փասատիւնայի Lake Avenue եկեղեցւոյ մէջ:

Առաջնորդ Սրբազան Հայրը անձամբ ներկայ պիտի ըլլայ զոյգ հանդեսներուն եւ պիտի փոխանցէ իր օրհնութիւնները:

Յայտնենք որ բոլոր հանդեսները կը վայելեն Առաջնորդ Սրբազան Հօր հովանաւորութիւնը: Առաջնորդ Սրբազանը անձամբ կամ ներկայացուցիչներով ներկայ կ'ըլլայ հանդեսներուն:

Մոնթեպելլոյի Մեսրոպեան Ազգային վարժարանի 12-րդ կարգի շրջանաւարտներու եւ 8-րդ կարգի աշակերտներու հանդէսը տեղի պիտի ունենայ Շաբաթ, 20 Յունիսի երեկոյեան, վարժարանի շրջափակին մէջ: Յանուն Առաջնորդ Սրբազան Հօր, Գերայ. Տ. Միւռն Շ. Վրդ. Ազնիկեան ներկայ պիտի ըլլայ հանդեսներուն եւ պիտի փոխանցէ Առաջնորդ Սրբազանին օրհնութիւնները:

Նմանապէս, Շաբաթ, 20 Յունիսին, տեղի պիտի ունենայ Ռոզ եւ Ալէք Փիլիպոս Ազգային վարժարանի 5-րդ եւ 8-րդ կարգի աշակերտներու հանդեսները, վարժարանի մարզասրահին մէջ:

Սան Ֆրանսիսքոյի Գռուզեան-Չաքարեան-Վասպուրական Ազգ. վարժարանի 8-րդ կարգի հանդէսը եւս տեղի ունեցաւ Շաբաթ, 20 Յունիսի յետմիջօրէին, «Խաչատուրեան» Հայ Կեդրոնի «Սարոյեան» սրահին մէջ, Սան Ֆրանսիսքո: Յանուն Առաջնորդ Սրբազան Հօր, Հոգ. Տ. Պարթեւ Վրդ. Կիլիւմեան ներկայ պիտի ըլլայ հանդեսին եւ պիտի փոխանցէ Առաջնորդ Սրբազանին օրհնութիւնները:

Դաւթեան-Մարիամեան Կրթական Հաստատութեան ամալերջի հանդեսներու ծիրին մէջ, յայտնենք որ, Առաջնորդ Սրբազան Հօր տնօրինումով, Թեմիս հոգեւոր հայրերը յաջորդաբար ներկայ կ'ըլլան հանդեսներուն, կը գնահատեն հաստատութեան բոլոր նուիրեալ ծառայողները, ուսուցիչները եւ աշակերտները:

Նշենք, որ Դաւթեան Մարիամեան Կրթական Հաստատութեան հայերէն ծրագրի շրջանաւարտներու կեդրոնական հանդիսութիւնը տեղի պիտի ունենայ Շաբաթ, 20 Յունիսին, Կլենտէյլի Pacific Community Center-ին մէջ:

Գերշ. Տ. Եփրեմ Արք. Թապագեան ներկայ պիտի ըլլայ հանդեսին եւ պիտի փոխանցէ իր օրհնութեան խօսքը եւ Առաջնորդ Սրբազան Հօր բարեմաղթութիւնները:

## **PRELACY SCHOOLS' COMMENCEMENT CEREMONIES**

The commencement ceremonies of Prelacy Schools continue under the auspices of the Prelate. The Prelate attends the ceremonies and conveys his message and blessings to the students.

On Sunday, June 21<sup>st</sup>, the Prelate will attend the 12<sup>th</sup> grade graduation ceremony of Rose and Alex Pilibos School as well as the commencement ceremony of Levon and Hasmig Tavlian School.

The 12<sup>th</sup> grade and 8<sup>th</sup> grade graduations of Armenian Mesrobian School will take place on Saturday, June 20<sup>th</sup>. Very Rev. Fr. Muron Aznikian will represent the Prelate.

The 5<sup>th</sup> and 8<sup>th</sup> grade graduation of Pilibos School and the 8<sup>th</sup> grade graduation of KZV in San Francisco will also take place on Saturday. Very Rev. Fr. Barthev Gulumian will represent the Prelate at the KZV graduation.

Davidian and Mariamian Educational Foundation graduations also continue, which the Prelate or representatives attended.

The main commencement ceremony of the foundation will take place on Saturday at the Glendale Pacific Community Center. H.E. Archbishop Yeprem Tabakian will attend and convey the Prelate's blessings.

\*\*\*

### **Հ.Բ.Ը.Մ.Ի ԱՍՊԵՏՆԵՐՈՒ ՅԱՆՁՆԱԽՈՒՄԻ «ԵՐԵԿՈՅ ՄԸ ՄՏԱԽՐԱԿԱՆՆԵՐՈՒ ՀԵՏ» ՁԵՌՆԱՐԿԻՆ**

Հ.Բ.Ը.Մ.Ի Ասպետներու յանձնախումբը Հինգշաբթի, 18 Յունիսի երեկոյեան կազմակերպած էր դասախօսական ձեռնարկ մը, որ կը կրէր «Երեկոյ մը մտաւորականներու հետ» խորագիրը:

Դասախօսելու հրաւիրուած էին Փրոֆ. Գեորգ Պարտազճեան՝ Միշիկընի համալսարանէն, Եւ Տոքթ. Ճենկիզ Աքթար՝ Պոլսոյ Պահչէշեհի համալսարանէն: Նիւթն էր Յեղասպանութիւնը, հայ-թրքական յարաբերութիւններն ու թուրք մտաւորականներու կողմէ ներողութիւն խնդրելու արշաւը: Բանախօսները նաեւ պատասխանեցին ներկաներու հարցումներուն:

Յանուն Առաջնորդ Սրբազան Հօր , Արժ. Տ. Ռազմիկ Զինյ. Խաչատուրեան ներկայ եղաւ ձեռնարկին:

### **PRELATE REPRESENTED AT AGBU ASBEDS “AN EVENING WITH SCHOLARS”**

On the evening of Thursday, June 18<sup>th</sup>, the annual “An Evening with Scholars”, organized by the AGBU Asbeds Committee, took place at Agajanian Hall of AGBU Manoogian-Demirjian School.

The evening featured lectures by renowned scholars Prof. Kevork Bardakjian and Dr. Cengiz Aktar, on Armenian-Turkish relations, followed by a question and answer session.

Rev. Fr. Razmig Khatchadourian represented the Prelate.

\*\*\*